

դառնան իրենց հնազարդան ու պատմական Հայրենիքը՝ որուն կապված են կարտոփ, արցունքի և աղյուծի կապերով:

Անոնք, բաժնվելի տուաջ այս հողեն, որմե տտացան սնունդն իրենց ֆիզիկական ու հոգեկան, ուր կերտեցին լույս երազներ հայրենական, հարգանքի իրենց տուրքը կուգան մատուցանել դամբանին առջև այն Մեծ Մարդուն, ուր խորհրդանիշն եղավ աղ-գային ազատագրական պայքարներուն ու Մեծ Պաշտպանն, Հայրենիքին:

Եվ իրենց պես ու իրենց չափ, ո՞վ կարող է դնահատել ու հասկնալ վեհոթյունն ու մեծութունը լուր անոնց, որոնք ինկան հեղուսաբար, Հայրենիքի փառքին համար: Չէ՞ որ անոնք, ուր որ գացին ու գաղթեցին, Հայրենիքի սերն անաղաքո՞ղ զխոցան պահել վառ ու անմաշ, իրենց սրտին ու հոգվո մեջ միշտ ծրարած:

Այս ոգևոր ամբոխներուն ժպիտին մեջ, ես կտեսնեմ վիշտ մը խորունկ ու համակող ու իրենց խնդրքն արցունքներով է թրջված, որովհետև անոնք սիրելի Հայրենիքն մը կը հեռանան, երազներու Հայրենիքը ողջունելու, կբաժնվին, իրենց անկեղծ ու սրտակից բարեկամներեն՝ կարոտակեզ արենակիցներ վերագտանելու Արցունք կա անոնց աչքե-րուն մեջ ու հոգվոյն մեջ թախիծ անհուն... ու հետադարձ նալվածքներով խորասուչ, վերջին անգամ կզիտեն հողն օրհնաբեր, որ տվավ իրենց ավիշ ու կյանք ու ապրումներ, ուր մանկութուն մ՝ անդորր, խաղաղ կյանք ու աշխատանք վայելեցին ապահով, ուր

սրտերն իրենց բարբախեցին ու թոթաացին զղացումներու բազմապիսի լարերով:

Այն օրն, ուր, ո՞վ հեռացող եղբայրներ, ձեզմե միայն հիշատակներ պիտի մնան, մի՛ մոռնաք, մի՛ մոռնաք, որ տակավին, ձեզի համար կարոտակեզ սրտեր անվերջ պիտի բարբախին, ձեր սրտերու բարասուսին կըշ-տուցիով:

Ա՛խ, որբան պիտի փափաքի սեղմել ձեռքը յուրաքանչյուր մեկնողի, ողջագուրվիլ, ու կուրծքն անոր սեղմել կուրծքիս հրատու-շոր...

... Ու ծառին տակ այս մեծավոր, հուզում-ներուս անձնատուր, արցունքներ հորդ կհո-սին՝ զորս անկարող եմ զսպելու:

Ձեռքս՝ անծանոթ ուժե մը պրկված, խան-դագին կբարձրանա, ո՞վ հեռացող ու սիրելի եղբայրներ, ողջերթի անկեղծ մաղթանքնե-րով:

Ողջե՛րթ, ողջե՛րթ, ո՞վ սրտակից բարե-կամներ, ու բարի՛, հազա՛ր բարի ճանա-պարհ, ղեպի փառավոր ու լուսաշող Հայրե-նիքը ձեր բազմադարյան երազներուն, ուր կմաղթեմ կյանք մը խաղաղ ու երջանիկ ձեր բոլորին, ձեր զավակներուն ու թոռներուն, ինչպես նաև զայլք սերունդներուն:

Պիտի պահենք մեր սրտին մեջ հիշատակը, որ ձեզմե մեզի կմնա. պիտի պահենք զայն անաղաքտ, մի՛շտ, մի՛շտ, մի՛շտ...

Արաբերենն թարգմ. ՊԵՐՃ ՍԱՊՊԱՂՅԱՆ («Յփրատ» թիվ 2791, 1946 թ.)

ԱԼՃՆՐԸՆ ՊԼԵՔ

PETITION TO THE UNO*)

Պրե. Պլեխ Հայ Իրավանց Պաշտպանության Ամերիկյա՝ Հանձնախումբի անդամ-ներեն մին է, Սոսայթի Ֆոր էրիվ Բըլշըր Բեկերության առաջնորդը Նյու-Յորքի մեջ, և շատ գործոն դեր կկատարե քաղաքական և բնկերային բարելավման շարժումներու և հարցերու մեջ:

Միացյալ Ազգաց Կազմակերպության Հա-մաժողովը, որ գումարվեցավ Լոնտոնի մեջ, ստացած է բազմաթիվ պատգամներ այս շաբթվան ընթացքին: Ոմանք կվերաբերին միջազգային սպառազինման և հրուզեական ոռումբի գործածության: Եվ ոմանք ալ կշո-շափին մասնավոր ժողովուրդներու կենաց հանգամանքը, որոնք կըմբռնեն որ այժմ հարմար ժամանակն է մարդկության խղճին դիմելու: Մարդիկ իրավամբ կնային Միաց-

յալ Ազգաց Կազմակերպության վրա, որպես պաշտպանության և դիմումի համաշխար-հային կեցրուն մը, իբրև աղբյուր մը արդա-րության և կարեկցության:

Ժողովուրդ մը. որ թվով շատ փոքր է, մո-տափորապես շորս միլիոն, դիմում կատա-րած ըլլալով անոր, ոմանք անկարելոր պի-տի գտնեն: Բայց մենք ըսած չենք, որ ամեն մարդ, կին, երեխա կարևորություն ունի, թե ամեն ժողովուրդ պետք է պաշտ-պանվի, նկատողության արժանանա և զնա-հատվի:

Կխափմ ժողովրդի մը մասին, որ երբեմն

*) Սույն ուղերձը հաղորդված է Միացյալ Նահանգ-ներու բազմաթիվ ռադիոկայաններին:

ուներ պատմական և ավանդական արմատներ, մշակութային և հոգեկան հայրենիք մը: Կիտսիմ Հայոց մասին:

Հայաստան երկիր մըն է, որ կզանվի Սև և Կասպից ծովերու միջև: Ան բերրի երկիր մըն է պտուղներու և բրնձի, բամբակի և ծխախոտի, անտառներու և արջառներու և պղնձի: Արգասավոր ձորերու երկիր մըն է: Դարպաս մըն է Արևելքի և Արևմուտքի միջև, — բնդմեջ Պարսկական ծոցին, Հնդկական օվկիանոսին և Միջերկրական ծովունավահանգիստներուն: Երկիր մըն է, ուր Եվրոպա և Ասիա իրարու կմիանան, և ուր կայսրություններ մաքառած են ի խնդիր տիրակալության, ասպատակած են անոր ժողովուրդը, թողելով մոխիրներու ավերակներ և բեկորներ, անթուփյուն, գերութուն և մահ:

Հայաստան առ նվազն 3500 տարվան պատմութիւն մը ունի: Քաննեֆոն Քրիստոսե առջ 401 թիվականին այս երկրին անցած է: Մեծն Աղեքսանդր՝ Քրիստոսե 331 տարի առաջ, գրավեց զայն Պարսկական կայսրութենէն: Հռոմայեցիք նվաճեցին զայն: Բայց հայեր շարունակ անկարողության և ազատության ժամանակաշրջաններ ունեցան: Ան առաջին ազգն է եղած, որ քրիստոնեութունը որպես պետական կրոն ընդունած է 303 թիվին: Երկիրը արշավող ասպատակներու կարգեն են արաբներ, պարսիկներ, քուրտեր, մոնղոլներ և թուրքեր: Վերջնազույն դարուն մեջ ցարական Ռուսիան և Թրքական կայսրութիւնը տիրապետած են հոն: Թրքաց տիրապետության ներքո հայերը ցեղախին և կրոնական հալածանքներու երթարկված են, — հաղտահարութիւն, հափշտակութիւն, խտրողական հարկահանութիւն, և վերջապես, — կոտորած և տեղահանութիւն: 1894—1896-ի կոտորածներու ընթացքին առավել քան 300.000 հայեր բնաջնջվեցան: 1909-ին առնք դարձյալ առանջվեցան Երիտասարդ Թուրքերու վարչաձևեն: Եվ 1915 մինչև 1916, երբ Թուրքերը տարակուսեցան անոնց հավատարմության վրա, և երբ Դաշնակիցները իրենց պատերազմական նպատակները հայտնեցին, ըստ Դերկրմա Պրայսի, միլիոնի մը մոտ հայեր ջարդվեցան: Շատ դուռութիւններ կմոռնանք: Սերունդ մը առաջ, ամերիկացիք մեծապես հուզեցան հայոց կացութենէն: Այս իրողութիւնները կրնանք քաղել Բրիտանական Համայնագիտութան և կամ Փոքր Ասիոյ որևէ արժանահավատ պատմութենէ մը: Ասոնք ազահ և ամոթալի պատկերի մը մասն են, թե ինչպես մարդիկ կվարվին իրարու հետ: Ըլլա-

յով փոքր ժողովուրդ մը, ո՛չ այնքան հզոր ուժերորեն դիմադրելու, և ո՛չ ալ բավականաչափ հարուստ՝ իր անկախութիւնը դնելու փոխարինազար բան մը տալով, և ո՛չ ալ ըստ բավականի ծանոթ, որպեսզի Դաշնակիցներու և իր դրացիներու սրտին դիմեր, այս պատմառով անիկա անասելիորեն տառապած է:

Այս աշխարհին մեջ փոքր ազգերու համար ապահովութիւն չկար: Ոչ մեկ ժողովրդի գոյութիւն իրավունքը ապահովուած էր, մանկանց ոչ մեկ սերունդ կարող էր մեծանալ առանց պահատես ըլլալու բարոս անգթութիւն և բռնութիւն՝ այնպիսի բաներու համար, որոնք նվիրագործված էին իրենց հայրերու կողմէ:

Եթե ակնարկ մը տանք իրանացիներուն և կամ Ճափացիներուն, կորեացիներուն կամ եթովպիացիներուն, որևէ տեղի փոքր ազգութեան մը, հարց հարուցված չէ, թե «Ի՞նչպես կրնանք արդարութիւն ի գալ՞ծ դնել այս ժողովրդաց համար: Ի՞նչպես կրնանք հաստատել ապահովութեան դրութիւն մը, որուն մեջ ամեն ժողովուրդ ապահովութիւն գտնեն»: Բայց առաջնապես հարց եղած է, թե «Ան ի՞նչպես պիտի նպատես մեր ազգի գոյութեան կամ մեր կայսրութեան: Թե ի՞նչպես մեր հարաբերութիւնները պիտի ազգիին մեր թշնամուին»: Յրանսիացի կամ Ռուսիո կամ Թուրքիո և կամ Ճաստիկ վերաբերմամբ»:

Բիրտ ուժի բաղաբականութիւնը պատուհասած է հայերը, որով եվրոպական և ասիական պետութիւնները սակարկած և պայքարած են իրարու հետ, գործածելով հայ ժողովուրդը իբրև գրավ: Քաղաքակիրթ մարդու պատմութեան մեջ ասիկա անարդանք մըն է: Ասիկա տխուր մեկնաբանութիւն մըն է թե քրիստոնյա և թե մահմեդական ազգեցութեան վրա, և միայն խորհրդային Միութիւնը իրավացի և քաղաքականապես փափաքելի և ողջմիտ նկատած է, այս ժողովրդին տալու հողի պատառ մը, ապահովութիւն և մշակութային ինքնուրույնութիւն, և դաստիարակութիւն, աճման ու հառաջդիմութեան միջոցներ: 1920-ին, երբ հազիվ երկրամաս մը խոստացված էր, թուրքերը դարձյալ հարձակեցան և ահա այս միջոցին էր որ խորհրդային Հայաստան հիմնադրվեցավ:

Խորհրդային Հայաստան իրապես նպաստած է հայ ժողովրդի կյանքին: Ան վայելած է Սովետական Միութեան պաշտպանութիւնը: Նույնիսկ անոնք, որոնք կըննդատեն համայնավարութիւնը, կրնդոմին զայս: Սովետ դրութեան մեջ ապահովուած են զանազան ժողովուրդներու, մեծ և փոքր, սե-

փական լեզվի գործածությունը, անոնց դպրոցները. կրթության քաջալերությունը ոչ միայն ափսոս զարգացնել հրիտասարդ և բնիկ անաշխորդներու ձիրքերը, այլ նաև քաղաքական պատասխանատվությունը տեղային կառավարության գործին մեջ, — և փոխադարձ օգնություն՝ փոխադրության և տնտեսական փոխանակության գործերու մեջ, 1920-են ի վեր, հայեր այս հանրապետության մեջ վայելած են մշակութային ինքնավարություն:

Սակայն ասիկա չի լուծեր միջազգային հարցը: Այսօր, ալիքի քան մեկ միլիոն հայեր ցան ու ցիր եղած են ամբողջ Եվրոպայի և Փոքր Ասիո մեջ, — Իրանի, Իրաքի, Սուրիո, Լիբանանի, Եգիպտոսի, Պուլղարիո, Հունաստանի, Ֆրանսայի և Ամերիկայի մեջ: Անոնք տարագրյալներ են, որոնք տառապած են անոթությունմբ, աղքատությունմբ, հիվանդությունմբ, հարստահարությունմբ, հափրչտակությունմբ և կոտորածով: Անոնք ճաշակած են քաղաքական իրավանց զրկանք և ամեն տեսակ հալածանք: Ի հեճուկս այս ամենուն, անոնք վերապրած են:

Տրամաբանական չէ՝ անոնց համար սպասել և պահանջել, որ հին անիրավությունները ուղղվին և նոր կարգադրություն մը ըլլա իրենց համար: Անտարակույս Միացյալ Ազգաց Կազմակերպության պատասխանատվությունն է նկատի առնել՝ որ ժողովուրդ մը կարենա այս աշխարհիս վշտ եւեղ մը ունենալ, որ նվիրականացած է իր անցյալով, նշանակալից դարձած իր պատմությունմբ և իրագործություններով, տե՛ղ մը, ուր ամեն փնջ հարագատ ըլլալով իր հոգեկան և մշակութային կյանքին, կարողանա բնական աճման և արտադրության բարիքները վայելել: Հայոց հանգամանքին մեջ, գոնե կարելի է մեկուսացնել այն վայրերը, ուր որ ավանդական և պատմական տարածությունն ու սահմանները հատակ են: Եվ ուր բնակիչները կիսովին, կարող են գաղթել սահմաններեն անդին, — մասնավորապես ուր հորը, պատմությունն ու բնակչությունը կմատնանըն են որ Հայկական է, — և ուր իշխող ազգին կարելի չէ վստահիլ, որ ուղղամտությամբ վարվի հայ փոքրամասնության հետ:

Հայեր կողմեն հայրենիք մը, որ ըստ բավականի հզոր ըլլա, որպեսզի կարենան և բաշխավորել իրենց սերունդներու, իրենց սեփական ձիրքերու և մշակութային կյանքի վերապրումը: Ժողովրդապետություն մը կողմեն, թեև փոքր, բայց ատակ՝ ժողովրդավար աշխարհի մը մեծագույն կատուցվածքին մասը կազմելու: Պատրաստ են պա-

տասխանատվություն մը տառնձնելու միջազգային ապահովության, տնտեսական և մշակութային փոխանակության նոր դրություն մը մեջ: Անոնց ազգայնականությունը նեղմիտ կամ մեկուսական չէ: Ազգայնամուլ կամ զինվորապաշտ չէ: Իրենց երկիրը սիրելով հանդերձ անոնք կարիք չեն զգարուրդներու վրա դերակալություն հաստատելու: Եվ ոչ ալ պետք կզգան ուրիշները ատելու: Այս ոգին է, որ կմղե Ամերիկայի հայերը ի մի գալու և իրենց դատը հարկադրելու Միացյալ Ազգաց Կազմակերպության:

Հայ ծագումով բազմաթիվ հայեր կան, որոնք մտադիր են Ամերիկայի մեջ ապրելու: Անոնք կարենն այս երկիրը: Անոնք մեծ ապագա մը կնախատեսեն Ամերիկայի համար և կրաղձան անոր մասնակցիլ, անոնք կիրաքին, որ իրենց զավակները մեծնան և ընդունակ ըլլան վայելելու անոր ժառանգությունը և հարստացնելու հասարակական կյանքը, որուն մաս կկազմեն: Պատշաճ է, որ հայերը սովորեցնեն իրենց զավակներուն հայրերու ժառանգության բարեմասնությունները, պարծելու իրենց անցյալ մեծ առաջնորդներով, իրենց երաժիշտներով և արվեստագետներով ու ռազմիկներով, շամաչելու իրենց ծնողներեն, այլ գոհունակ ըլլալու, որ անոնք ունեցած են տոկունություն և ազատասիրություն, ատկունություն, հալածանքներեն վերապրելու և նոր Աշխարհին մեջ հաստատվելու:

Առժամապես տարագրության մեջ ապրող հայերը, և հայկական ծագումով ամերիկացիները, ընդամենը 200,000 հոգի, որ այժմ կապրին Միացյալ Նահանգաց և Քանադայի մեջ, ունին որոշ պատասխանատվություններ այն երկրներին և այն մարդոց հանդեպ, որոնցմե սերած են, ինչպես նաև այն ազգին հանդեպ, որուն մեկ մասն են: Այդ պատասխանատվության և պարտականության անունով, անոնք իրենց պարտականությունը կատարեցին: Ամերիկահայ Ազգային Խորհուրդը և Հայ Իրավանց Պաշտպանությունը Հանձնախումբը խոսելով միլիոններու անունով, որոնք ցրված են աշխարհի ամեն կողմը, խնդրազգիքներ մատուցին Միացյալ Ազգաց Կազմակերպության: Անոնք հիշեցուցին Միացյալ Ազգաց Կազմակերպության իրենց պատմությունը և տվախտանքները, իրենց հավատալիությունը ժողովրդավարության դատին հանդեպ հրեթալս առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմներու, առաջին համաշխարհային պատերազմին հետո իրենց տրված խոստումները, իրենց կրած տառապանքները թուրքերեն, որոնք անվա-

նապես չեզոք մնացին և սակայն համագործակցեցան ֆաշիստներուն հետ: Անոնք մատնանշեցին Թուրքիո տիրապետության Լնթակա երկիրներու մեջ այն ոչ-դեմոկրատիկ դավադրությունները, որոնցմով զլացված է իրենց ապահովություն և քաղաքացիական իրավունքներ, թույլ տալով թուրքերուն, որ վերադառնան այն շրջանները, որոնք ի սկզբանե Հայաստանի մասն ըլլալով խոստացված էր անոնց, և թուրքերն գրավելու երկիրներու մեջ հայոց դեմ ի դուրծ դրված իտարական դավերը:

«Մենք, ներկայացուցիչներս, երկրագնդի դանազան մասերու մեջ ցիր ու ցան մեկ միլիոնն ալեի! հայ ապաստանյալներուն, կխնդրենք Ձեր բարձրութենն, որպեսզի ի դուրծ դնեք պարտապատշաճ միջոցներ, Սովետ Հայաստանի վերադարձնելու Թուրքիո կողմն գրավելու Հայկական Նահանգները, քեթ ախ հողամասերը, որոնք պարտնակված էին նախագահ Գեղարքունի վողմն գծված սահմաններուն մեջ, և անոնց վրա վերադնակեցնելու երկրագնդի վրա ցան ու ցիր մեր տարագիր հայրենակիցները...»

«Բազում երկիրներու մեջ հայք տակալին տարատանյալներու գոյալիճակ ունին, կենդակացենն միջազգային հարց մը և ծանրորեն կճնշեն քաղաքակիրթ աշխարհի լիդըր: Արդարության պահանջ մըն է, որ անոնք վերաբնակեցվին աղտոտության և ապահովության պայմաններու մեջ: Հմուտ անձինք ամենուրեք կհավատան, որ այս պայմանները կարելի է իրագործել միացնելով Թուրքիայի կողմն գրավելու Հայկական Նահանգները Սովետ Հայաստանի հետ, ուր քսան հինգ տարվան կարճատև ժամանակի մը մեջ ազգ մը փրկված է բնաջնջման անդունդեն, և ուր տնտեսական, բնկերալին և մշա-

կութային վերազարթնում մը հառաջացած է, որ եզական ! հայ պատմության մեջ»:

Ինչ կխորհիք այս դիմումի մասին: Բազում ամերիկացիներ անկատ կընեն Հայոց դատը: Փոքր ժողովուրդ մըն են, փոքր թվով: Բազում ամերիկացիներ նախապաշարումներ ունին այսօրինակ զանազուն հեռանկարներով ժողովրդի մը դեմ, որուն պատմութենն, բնութենն և հարցերն անտեղյակ ենք:

Սակայն, եթե կհավատանք ժողովրդավար ընկերության մը և խաղաղ աշխարհի մը, պետք է ճանչնանք, որ ամեն փոքր ազգ մտահոգություն մը կպատճառե: Ամեն մեկ ազգի մեծամասնության համար հրամայական է, որ ամեն մարդ ապահով և ազատ ըլլա իրաբակախ դրսեկյամը մը: Միացյալ Ազգաց Կազմակերպության փորձաքարը կկայանա այս փոքր ազգերու հարցերուն նկատմամբ անոր ցուցահանած վերաբերումին մեջ: Մեր պատվիրակներու փորձանիշը, անոնց իմաստությունը, անվեհերութունը և դիվանագիտությունը կկայանան նաև այս տեսակ հարցերու ղեկավարության մեջ: Սակայն կոնտրոլի մեջ դուժարված Խորհրդատու ժողովի մեր պատվիրակներուն վրա չի ծանրանար ամբողջ պատասխանատվությունը: Ինչ որ կընեն, փոփոխուկի կախումն ունի մեզմե: Ընդունա՞կ ենք ազատության, Ընդունա՞կ ենք խաղաղության: Յուրյ տանը մեր արժանավորությունը, ու Միացյալ Նահանգաց և աշխարհի գիտակցությունը իրականացնենք Միացյալ Ազգաց Կազմակերպության միջոցով, որ խաղաղության և արդարության մեր նորագույն գործակալությունն է*):

Թարգմ. ԵՂԻՇԵ ՏԵՊԱՂՅԱՆ
(«Վրաբեր» թիվ 106, 1946 թ.)

Ն Ե Ր Գ Ա Ղ Թ Ի Հ Ե Տ Ք Ե Ր Ո Վ

Էլ ՀԱՎԱՏԻՄ-ի մեջ կկարդանք.
«Ձեզ պտտուսի էլ Ահրամ թերթեն անված լուր մը, ըստ որում Գահիրեի, Ներգաղթի Կոմիտեի անդամներն մեկը հայտարարություն մը ընելով էլ Ա.Հ.Ր.Ա.Մ-ի թղթակցին, ըսած է՝ թե Սուրիո և Լիբանանի 170 հազար Հայերուն 135 հազարը, իսկ Պաղեստինի 15 հազար հայության 12 հազարը, արդեն արձանագրված են ու կփախարին Սովետական Հայաստան վերադառնալ:
Մեկնիլ փախաբողներուն մեջ կա կարևոր թիվ մը բարեկեցիկներու, որոնք հայրենասիրութենն տարված որոշած են հեռանալ

Միջին Արևելքի երկրներն հաստատվելու համար իրենց Մայր Հայրենիքին մեջ:
Հայրենիքի հանդեպ այս կարտոսի զգացումներն զատ ո՛չ մեկ պատճառ պիտի մղեր ղիրենք հեռանալու արար երկրներն, ուր տարիներն ի վեր գտած են եղբայրական և բարեկամական անկեղծ բնույններություն մը»:

(«Վիրատ» թիվ 2767, 1946 թ., Հալեպ)

*) Տպագրվում է որոշ կրճատումներով
ԽՄԲԱԳՐ.